

Մի կաթիլ մեղրը



Exported from Wikisource on 08/05/20

Մի կաթիլ մեղրը

←
[Մուկիկի
մահը](#)

[Աղավառ
վանքը](#) →

[Հովհաննես
Թումանյան](#)

ՄԻ ԿԱԹԻԼ ՄԵՂՐԸ

Մի գյուղացի իրենց գյուղում
Խանութ սարքել, բան էր ծախում:
Օրվան մի օր մոտիկ գյուղից,
Մահակն ուսին, շունն ետևից

Ներս է մտնում մի զրո չոբան.
— Բարի օր քեզ, ա՛յ խանութպան,
Մեղրը չունե՞ս,
Մի քիչ տաա մեզ:
— Ունեմ, ունեմ, չոբան ախպեր.

Ամանդ ո՞ր է, ամանըդ բեր,
Ինչ տեղից որ ինքդ կուզես,
Էս սրհաթին քաշեմ տամ քեզ:

Էսպես հանգիստ, էսպես սիրով,
Մեղրից անուշ լավ խոսքերով

Մեղր են քաշում. մին էլ հանկարծ
Մի կաթ մեղրը ծորում է ցած:
— Տը՛գգ, են կողմից մի ճանճ գալի,
Էս կաթիլին վեր է գալի:
Ճանճի վրա, թաքուն-թաքուն,

Էս խանութի տիրոջ կատուն
Դուրս է ցատկում,
Թաթով զարկում...

Բայց հենց կատվի ցատկելու հետ
Հովվի շունը իսկույն նեթ

Հաֆ է անում,
Վեր է կենամ,
Խեղճ փխսիկին
Դընում տակին,
Ձեռաց խեղդում

Ու շրպրտում:

— Խեղդե՛ց, խեղդե՛ց, վա՛յ, իմ կատուն,
Ա՛յ սատկես դու, շան որդու շուն,-
Բարկանում է խանութպանը
Ու ձեռն ընկած մոտիկ բանը

Տուր՝ թե կտաս շան ճակատին,
Շուռ է տալի կատվի կողքին:

— Վա՛յ, ձեզ մատա՛ղ, ասլան շունըս,
Իմ ապրո՛ւստըս, տե՛ղըս, տո՛ւնըս...
Տունըդ քանդվի, ա՛յ խանութպան,

Անխիղճ, լիրբ, չար, ֆրլան-ֆրստան,
Ո՞նց թե դու իմ շանը զարկե՛ս,
Դե, զարկելը հիմի դու տես...
Գոռում է մեր աժդահակը,
Մեծագլուխ իր մահակը

Ետ է տանում ու ցած բերում,
Խանութպանին շենքում փրոռում:

— Ըսպանեցի՛ն... հա՛յ, օգնությո՛ւն...
Ու թաղից թաղ, ու տանից տուն
Ձեն է տալի մեկը մյուսին.

— Հա՛յ, օգնությո՛ւն... ըսպանեցի՛ն...
Վերի թաղից, ներքի թաղից,
Ճամփի վրրից, գործի տեղից,
Ճիչով, լալով,
Հարայ տալով,—

Էլ հերն ու մեր.
Քիր ու ախպեր,
Կին, երեխեք,
Ընկեր տղեք,
Չոքանչ, աներ,

Քավոր, սանհեր,
Քեռի, փեսա...
Ինչ իմանաս էլ՝ ո՛վ է սա,
Գալիս են ու անվերջ գալիս,
Ով գալիս է՝ տուր թե տալիս.

— Տո՛, կոպիտ արջ, տո՛, վայրենի,
Էս տեսակ էլ բա՞ն կըլինի.
Դու առուտուր եկար անես,
Թե՞ իր շեմքում մարդ ըսպանես...

Մին ասում են՝ տասը զարկում,

Աղցան անում, մեջտեղ ձրգում,
Իր շան կողքին երկար ու մեկ:
— Դե՛, ձեր մեռելն եկեք տարեք:
Ու էստեղից բոթը գրնում,
Գրնում մոտիկ գյուղն է հասնում.

— Հե՛յ, օգնեցե՛ք,
Մեռած հո չեք,
Ըսպանեցին մեր գյուղացուն...

Ինչպես շրնաճանճի մի բուն
Քանդես, թողնես,

Էն ճանճի պես
Ամբողջ գյուղով օրդու կապում,
«Բու՛հ» են անում, դուրս են թափում
Ամեն միներ առած մի բան.

Որը ձեռին մի հրացան,
Որը եղան, ցաքատ կամ սուր,
Որը թի, բահ, որը շամփուր,
Որը կացնով, որը փետով,
Որը ձիով, որը ոտով,
Որն անգըտակ, որը բոբիկ —

Դեպի դուշման գյուղը մոտիկ:
— Տո՛, էսպես էլ անհրավ գյո՛ղ.
Ոչ խիղճ ունեն, ոչ ահ-երկյուղ.
Մարդ գընում է առուտուրի,
Հավաքվում են՝ քաշում սրբի:

Թո՛ւ ձեր գեղին, միջի մարդին,
Ձեր նամուսին, ձեր աղաթին...
Գընա՛նք, զարկե՛նք,
Ջարդե՛նք, կրակե՛նք...
— Հա՛յ, հո՛ւյ, հառա՛ջ, դե՛ ձեզ տեսնե՛մ...

Ու դուրս եկան իրարու դեմ,
Հա՛ զարկեցին ու զարկեցին,
Կոտորեցին, կըրակեցին,
Ինչքան ավել կոտորեցին,
Էնքան ավել կատաղեցին,

Ջարդեցին իրար,
Ջընջեցին իրար,
Կորան, գընացին
Գետնին հավասար:

Դու մի՛ ասիլ, մեկը մեկից

Էսքան մոտիկ, սահմանակից
Էս գյուղերը հարկ են տալի
Ամեն մինը մի արքայի:
Մի տերության թագավորը,
Երբ լսում է Էս բոլորը,

Արձակում է հրրովարտակ
Ժողովրդին իր հրապատակ.
— Հայտնի լինի մեր տերության,
Զինվոր, բանվոր, ազնվական —
Ամեն շարքին

Ու աշխարհքին,
Որ անօրեն ու դավաճան
Մեր դրացի ազգը դաժան,
Երբ մենք քրնած էինք սիրով,
Մեր սահմանը մըտավ գոռով,

Ու կոտորեց սուրը ձեռին
Մեր սիրելի գավակներին:
Արդ, սրբահար ու հրրակեզ
Մեր որդիքը կանչում են մեզ,
Եվ մենք, ընդդեմ մեր իսկ կամքին,

Պատվեր տրվինք մեր բանակին,
Թընդանոթով մեր ավերող
Ու աստուծով մեծակարող,
Հանուն արդար ու սուրբ ոխի
Մըտնի հողը մեր ոսոխի:

Մյուսը նույնպես իրեն հերթին
Գըրեց գորքին, ժողովրդին.
Մարդկանց առաջ և աստրծու,
Բողոքում ենք մեր դրրացու
Վարմունքի դեմ և չար, և նենգ,

Որ ոտքելով ամեն օրենք,
Բորբոքում է կըռիվ ու վեճ
Հին հարևան ազգերի մեջ,

Քանդում սիրո դաշը կապած:
Արդ՝ ակամա մենք ըստիպված,

Հանուն պատվի, արդարության,
Հանուն թափված անմեղ արյան,
Հանուն ազատ մեր աշխարհի,
Հանուն աստծու և իր փառքի —
Բարձրացնում ենք մեր ձայնն ահա

Ու մեր սուրբ նորա վրա:
Ու ըսկսեց կրոնիվն ահեղ:
Շոինդ, որոտ էստեղ, էնտեղ:
Կըրական ընկավ շեն ու քաղաք,
Արյուն, ավեր, ճիչ, աղաղակ,

Ամեն կողմից սարսափ ու բոթ,
Ամեն կողմից մեռելի հոտ...
Ամառ, ձմեռ,
Ողջ տարիներ
Մըշակն անբան,

Դաշտերն անցան,
Ու, կրոնիվն չըդադարած,
Սովը եկավ համատարած:
Սովը եկավ — սովի հետ ցավ,
Ծաղկած երկիրն ամայացավ...

Իսկ մնացած մարդիկ իրար
Հարցնում էին սարսափահար,
Թե ո՞րտեղից արդյոք ծագեց
Էս ընդհանուր աղետը մեծ:

1909

Արտաքին հղումներ

- [«Մի կաթիլ մեղր» խոսող գիրք](#)

About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](http://wikisource.org)^[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](http://creativecommons.org/licenses/by-sa/3.0)^[2] license or, at your choice, those of the [GNU FDL](http://www.gnu.org/copyleft/fdl.html)^[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)^[4].

The following users contributed to this book:

- Վազգեն
- Սահակ
- Lozman

-
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
 2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
 3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
 4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)